ՌՈՒԲԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Հասարակ և հատուկ գոյականների ուսուցումը նպատակ ունի մի կողմից ընդլայնել և խորացնել կրտսեր դպրոցում աշակերտների ունեցած գիտելիքները գոյականի այս խմբերի իմաստային և քերականական տարբերությունների վերաբերյալ և նպաստել դրանց տրամաբանական, գիտակցական յուրացմանը, մյուս կողմից հարստացնել աշակերտների բառապաշարն ու նպաստել խոսքի զարգացմանը:

Հատուկ և հասարակ գոյականների ուսուցումը կազմակերպելիս կարևոր է սովորողների բառապաշարի հարստացման մանկավարժական պայմանների, ռազմավարության և ընթացակարգերի առավել արդյունավետությունը:

Միայն ուսուցման ավանդական մեթոդներն այսօր բավարար չեն հայոց լեզվի արդյունավետ ուսուցման և սովորողների բառապաշարի հարստացման համար: Սովորողների գիտելիքների մակարդակի բարձրացմանը կարելի է հասնել ուսուցումը և ուսումնառությունը ակտիվացնող փոխներգործուն մեթոդների, նոր տեխնոլոգիաների կիրառմամբ, միջառարկայական դասերի, դերային և մտածողական խաղերի օգտագործմամբ:

Հատուկ և հասարակ գոյականների ուսուցումը նպատակ ունի մի կողմից հարստացնել աշակերտների բառապաշարը նոր անձնանուններով, տեղանուններով, ազգային հերոսների, տոների, կազմակերպությունների անուններով, մյուս կողմից հատուկ անունների ուղղագրության ուսուցմամբ խորացնել ուղղագրության վերաբերյալ աշակերտների գիտելիքները: Ճանաչողական տեսակետից նպատակային է տարբեր առարկաների հետ (պատմություն, աշխարհագրություն, գրականություն) առնչությունների ստեղծումը, դասագրքերից համապատասխան այնպիսի օրինակների գործադրումը, որոնք կառանձնանան թե լեզվական և թե ճանաչողական դաստիարակության արժեքով:

Այս թեման ուսուցանելիս կարելի է ինչպես ավանդական (ուսուցչի խոսք, զրույց, վերլուծություն)[1], այնպես էլ նոր ժամանակակից համագործակցային մեթոդների և մեթոդական հնարների (ուսուցման ԽԻԿ համակարգ, խմբային աշխատանք, մտագրոհ, դիագրամների բուրգ, պրոբլեմային առաջադրանքներ, Т-ածև աղյուսակ, փոխներգործուն գրառումների համակարգ

[1] Ս. Գյուլբուդաղյան, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Եր., 1987:

(ՓԳՀ), մանկավարժական խաղեր[2]: Թեմայի ամրապնդումը կարելի է իրականացնել տարաբնույթ առաջադրանք-վարժությունների կիրառմամբ:

Աշակերտների ինքնուրույն ուսումնառության կարողություններ զարգացնելու առումով նպատակային է «Հատուկ և հասարակ գոյականներ» թեմայի ուսուցման առաջին փուլն իրականացնել ԽԻԿ (խթանում – իմաստի ընկալում – կշռադատում) համակարգով, որն իրենից ներկայացնում է ուսուցման և ուսումնառության երեք փուլից բաղկացած մտածողությունը խթանող համալիր մոդել:

Խթանման փուլը, որն ուսումնական խնդրի առաջադրման, նախապատրաստման փուլն է, ինչը խթան է հանդիսանում առաջիկա գործողությունների համար, սկսվում է ուսուցանվող թեմայի վերաբերյալ կրտսեր դպրոցում ստացած նախագիտելիքների վերհիշմամբ: Ծանոթ թեմայի վերհիշումը կարող է կամուրջ ծառայել նոր թեման լավ յուրացնելու, ունեցած նախագիտելիքները խորացնելու և հարստացնելու համար:

Թեմայի վերաբերյալ աշակերտների նախկին գիտելիքներն ակտիվացնելու նպատակով ուսուցիչը կիրառում է մտագրոհ մեթոդական հնարը: Մտագրոհի առարկան կարող է դառնալ ուսուցչի կողմից տրված հարցը, գծապատկերը, աղյուսակը, որոնք օգնում են ակտիվացնելու իմացածը:

Հարց ա. – Ի՞նչ գիտեք հատուկ և հասարակ գոյականների, նրանց իմաստների, գրության վերաբերյալ:

Այս փուլում կարելի է կատարել մի շարք իմացական վարժություններ, ինչը կստիպի սովորողներին քննության ենթարկել սեփական գիտելիքները: Օրինակ, կարելի է հանձնարարել այսպիսի առաջադրանք. գոյականներ են Հայաստան, պետություն, Կոմիտաս, երգահան, ե. Չարենց, Վոլգա, գետ, «Գևորգ Մարզպետունի», պատմվեպ: Ինչու՞ դրանց մի մասը գրվում է մեծատառով:

Այսպես աշակերտները ակտիվացնում են իրենց հիշողությունը ի մի բերելով թեմայի վերաբերյալ կրտսեր դպրոցում ունեցած գիտելիքները:

Հատուկ և հասարակ գոյականների իմաստային տարբերությունների հետ կապված նոր գաղափարների հաղորդումը իրականացվում է իմաստի ընկալման փուլում: Ուսուցիչը աշակերտների միջոցով ստեղծում է հասարակ և հատուկ գոյականների վերաբերյալ դիագրամների բուրգ: Այս գրաֆիկական պատկերը աշակերտներին հնարավորություն է տալիս թեմային առնչվող մանրամասների միջոցով եզրահանգումներ կատարել: Աշակերտները պատկերի

---

[2] Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Սեմինար պարապմունքների ուղեցույց, Ցեղնարկ ուսուցիչների համար, «Այրեքս», 2005. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Կրթության ազգային ինստիտուտ, Լոռու մասնաճյուղ», «Վանատուր», 2008:

միջոցով ակնառու կերպով տեսնում են, թե դիտարկումներ և եզրահանգումներ անելու համար որքան կարևոր են մանրամասները:

Աշակերտները նախնական առաջադրանքներ են ստեղծում, ինչի միջոցով էլ ի մի է բերվում ընդհանուր տեղեկատվությունը: Ուսուցիչը դասարանը բաժանում է 5-հոգանոց չորս խմբի: Խմբերին տրվում են քարտեր. յուրաքանչյուր մեկ խմբին 1 քարտ: Հանձնարարվում է կարդալ տեքստը և դուրս գրել հատուկ և հասարակ գոյականները: 1-ին և 3-րդ խմբերին հանձնարարվում է տեքստից դուրս գրել հասարակ գոյականները, իսկ 2-րդ և 4-րդ խմբերին հատուկ գոյականները:

Խմբերը քարտեզի վրա նշում են ուղղորդվող հարցի հետ առնչվող բառերը: Յուրաքանչյուր քարտի վրա գրի է առնվում մեկ գոյական: Օրինակ այն խումբը, որը տեքստից պետք է դուրս գրեր հասարակ գոյականները, առանձնացվում է **ուսուցիչ, ծիլ, թուղթ, վագր, ծիծեռնակ, անձրև, ձյուն, սեր, ատելություն** բառերը:

Հաջորդ քայլին պետք է դասավորել քարտերը: Ուսուցիչը հարցնում է հնարավոր է արդյոք ինչ-որ քարտեր համախմբել, միավորել. այլ կերպ աշակերտներին առաջարկվում է մտագրոհի միջոցով քարտերի յուրաքանչյուր խմբի համար վերնագիր մտածել: Աշակերտները խմբով քննարկում են, իսկ ուսուցիչը օգնում է խմբերին համաձայնության գալ: Ընտրվում են հետևյալ գլխագրերը անձ, իր, կենդանի, բնության երևույթ, վերացական հասկացություն: Այսպես խմբավորելով և դասավորելով քարտերը աշակերտները ձևավորում են «Դիագրամների բուրգի» հիմքը, այսինքն հիմնային շերտը: Ընտրված գլխագրերից յուրաքանչյուրը գրում են նոր քարտի վրա և դնում համապատասխան դասակարգումների վերևում կառուցելով «բուրգի» երկրորդ շերտը: Այնուհետև ուսուցիչը գրատախտակի վրա գծում է երկու ուղղանկյուն, որոնք ներկայացնում են «բուրգի» երկու շերտերը: Ուսուցիչը բուրգի համար ստեղծում է վերնագիր «Հասարակ գոյականներ», որն արտահայտում է 1-ին և 2-րդ շերտերի ընդհանուր գաղափարը: Այնուհետև ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին, օգտվելով վերնագրից և տեքստից դուրս գրած բառերի դասակարգումներից, մեկ նախադասությամբ գրել մի դրույթ, որը կամփոփի բուրգում ներկայացվող ողջ տեղեկությունը: Աշակերտները գրում են մեկ նախադասությունից բաղկացած եզրակացություն: Հասարակ գոյականները անվանում են նույն տեսակի առարկաներ և հասկացություններ (անձ, իր, կենդանի, բնության երևույթ, հասկացություն):

Նույն եղանակով 2-րդ և 4-րդ խմբերը ստեղծում են հատուկ գոյականների վերաբերյալ դիագրամի բուրգ: Այսպիսով, «դիագրամների բուրգի» պատկերի միջոցով աշակերտները ուսուցչի կողմից հանձնարարված առաջադրանքի կատարումով ի մի են բերում ընդհանուր գիտելիքները թեմայի վերաբերյալ և կշռադատված ամփոփումներ անում:

Հատուկ և հասարակ գոյականների իմաստային տարբերությունը ակներև դարձնելու նպատակով ուսուցիչը T-ածև աղյուսակով, որը միևնույն հասկացության, խնդրի հակադիր կողմերը տարբերակող T տառը հիշեցնող գծագրական դասակարգիչ է, աշակերտների ուշադրությունն է հրավիրում մի քանի հասարակ անուններ, որոնք կարող են ունենալ իրենց հատուկ անունները:

Զուգահեռ գրված գոյականների անունների համեմատության միջոցով ուսուցիչն աշակերտին բացատրում է դրանց իմաստային տարբերությունը, այսպես **քաղաք** անունը ընդհանուր անուն է, բոլոր քաղաքները հավասարապես անվանվում են քաղաք. և Երևանն է քաղաք, և Մոսկվան, և Փարիզը, սակայն ամեն մի քաղաք Երևան չէ կամ Մոսկվա, կամ էլ Փարիզ: Ուրեմն Երևան, Մոսկվա, Փարիզ անունները քաղաքներից միայն մեկին են տրվում մյուս բոլոր քաղաքներից տարբերելու համար: Նույն ձևով **աղջիկ** անվանում ենք բոլոր աղջիկներին, դա աղջիկներին տղաներից զանազանելու համար տրված ընդհանուր անուն է, իսկ Անահիտը, Նարեն բոլոր աղջիկներից միայն մեկին կամ մյուսին տրված անուններ են նրանց տարբերակելու և զանազանելու համար: Աշակերտները հարցնում են նույն անձնանունը կարո՞ղ է վերագրվել բազմաթիվ անհատների: Ուսուցիչը բացատրում է դիցուք **Անահիտ** անունով կարող են կոչվել բազմաթիվ աղջիկներ, սակայն դա չի նշանակում, որ այդ անունը դառնում է ընդհանուր տեսակի, խմբի անուն: **Անահիտ** անվամբ չեն կոչվում մյուս աղջիկներից ինչ-որ տարբերակիչ հատկություն ունեցող աղջիկներ: Նրանք նույն **Անահիտ** անվամբ չեն ընդհանրացվում, **Անահիտը** միշտ մնում է որպես եզակի, առանձնացված անուն, որովհետև ամեն կիրառության մեջ վերագրվում է մեկ կոնկրետ աղջկա (մեր հարևանուհի Անահիտը, մեր դասարանի Անահիտը, ուսուցչուհի Անահիտը, Հակոբյան Անահիտը և այլն): Երբ ասում ենք աղջիկ, հասկանում ենք մարդկանց մի տեսակ, խումբ, սեռ, որ ընդհանուր հատկանիշներով տարբերվում է մյուսներից, սակայն Անահիտ ասելով երբեք աղջիկների մի առանձին տեսակ, խումբ չենք կարող հասկանալ:

Այս բացատրությունից հետո ուսուցիչը ընդհանրացնում է. **1-ին շարքի գոյականները միևնույն տեսակի, տիպի, խմբի մեջ մտնող առարկաներին տրվող ընդհանուր անուններ են, իսկ 2-րդ շարքի գոյականները միևնույն տեսակի, խմբի մեջ մտնող առարկաներից միայն մեկին են տրվում գոյականները նույն տեսակի բոլոր առարկաներից տարբերելու համար:**

Ուսուցիչը ձևակերպում է սահմանումը **միևնույն տեսակի առարկաներին տրվող ընդհանուր անունը կոչվում է հասարակ անուն: Միևնույն տեսակի առարկաներից յուրաքանչյուրին տրվող առանձին անունը կոչվում է հատուկ անուն**[3]: Այլ կերպ հասարակ գոյական անունը ցույց է տալիս ընդհանուրը:

---

[3] Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Եր., ԵՊՀ հրատ., 1970, հ. Ա, էջ 28-29:

Հասարակ անունների կարևոր առանձնահատկությունը այն է, որ այն կարող է հավասարապես վերաբերվել տվյալ տեսակի յուրաքանչյուր անձի, առարկայի. բոլոր ծովերը հավասարապես անվանվում են **ծով**, բոլոր գետերը **գետ**: Հատուկ անունները ցույց են տալիս եզակին և չեն կարող հավասարապես վերաբերվել տվյալ տեսակի յուրաքանչյուր անձի, առարկայի. բոլոր **գետերը գետ** են, բայց Արաքս ասելով երբեք ընդհանրապես Արաքս հասկանալ չենք կարող: Գրավոր խոսքում հասարակ անունների առաջին տառը գրվում է փոքրատառով, իսկ հատուկ անուններինը մեծատառով: Այստեղ աշակերտները լրացուցիչ տեղեկություններ են ստանում նաև հասարակ գոյականների ընդհանուր և կոնկրետ, առանձին իմաստի մասին: Այդ նպատակով գրատախտակին ուսուցիչը գրում է հետևյալ նախադասությունները «**Ծառը** բույսի մի **տեսակ** է» և «Մեր բակի ծիրանի **ծառը** ծաղկել է»: Ապա պարզաբանում է, որ երկու նախադասություններում էլ ընդգծված **ծառ** բառը հասարակ գոյական է: Այնուհետև ուսուցիչը ձևակերպում է պրոբլեմային հարց. «Ի՞նչ իմաստ է արտահայտում **ծառ** գոյականը յուրաքանչյուր նախադասության մեջ»: Ուսուցչի օգնությամբ աշակերտները պարզում են, որ առաջին նախադասության մեջ **ծառ** գոյականը ընդհանրապես **ծառ** է նշանակում, իսկ երկրորդ նախադասության մեջ **ծառ** հասարակ գոյականի իմաստը կոնկրետացված է (= կոնկրետ մեր բակի ծիրանի ծառը): Ուսուցիչը դարձյալ ձևավակերպում է պրոբլեմային հարց. «**Ինչու՞ երկրորդ նախադասության ծառ գոյականը, որը կոնկրետ, առանձին իմաստ է արտահայտում, հատուկ գոյական չէ. չէ՞ որ հատուկ գոյականների իմաստը կոնկրետ, առանձին առարկա ցույց տալն է**»: Այսպիսի պրոբլեմային հարցն իր պարունակած անհայտով առաջացնում է ճանաչողական դժվարություն, սակայն նման անհայտներն էլ հետաքրքրություն են հաղորդում ուսումնական գործընթացին զարգացնելով աշակերտների մտածողությունը: Առաջադրված հարցը լուծվում է ուսուցչի օգնությամբ: Ուսուցիչը բացատրում է, որ հասարակ գոյականը ընդհանուր իմաստ է արտահայտում: Հասարակ գոյականով միաժամանակ կարելի է անվանել առանձին առարկա, սակայն ընդհանուր իմաստը կարող է կոնկրետանալ միայն նախադասության մեջ: Ուսուցիչը կարող է կազմակերպել ամրակայող աշխատանք, որն էլ դասի կշռադատման կամ հետադարձ կապի փուլն է. ճանաչողական, հաղորդակցման հմտությունների և կարողությունների զարգացման նպատակով ամրակայող աշխատանքը կազմակերպել նաև խմբային մեթոդով:

Համագործակցային ուսուցման մյուս մեթոդների նման խմբային հետազոտությունը հենվում է աշակերտների փոխօգնության և համագործակցության վրա: Ուսուցչի միջամտությամբ ձևավորվում են խմբերը և խմբերին բաժանվում են համապատասխան առաջադրանքներ կամ ուսուցչի ընտրությամբ դասա-

գրքից (էջ 9)[4] ընտրվում են համապատասխան վարժություններ: Աշակերտները խմբով աշխատում են կոնկրետ խնդրի վրա: Առաջադրանքն ավարտելուց հետո խմբերը կարդում են դրանք: Այդ ընթացքում ուսուցիչն ուշադրություն է դարձնում, թե հատկապես որ մասում են աշակերտները թերացումներ ցուցաբերում, և եթե այդպիսիք առկա են, ապ մի անգամ անդրադառնում է այդ նյութին:

Աշակերտների ստեղծագործական մտածողության զարգացման և ակտիվության, անկաշկանդվածության դրսևորմանը նպաստում են ուսուցանվող նյութի սահմանները զանազան մանկավարժական խաղերը կազմակերպումը:

Աշակերտներին կարելի է հանձնարարել անվանակապ գրել: Մեթոդի էությունը հետևյալն է. գրել ցանկացած բառ (տվյալ դեպքում կարելի է գրել որևէ հատուկ անուն) և գրված բառի հերթական տառերով թվարկել նոր հատուկ անուններ:

Հատուկ գոյականների ուղղագրության ուսուցումը

Հասարակ և հատուկ գոյականների իմաստները յուրացնելուց հետո ուսուցանվում են հատուկ գոյականների տեսակները, ուղղագրությունը:

Հատուկ գոյականների ուղղագրության ուսուցումը իրականացվում է՝ նկատի ունենալով հանրակրթական դպրոցի առարկայական ծրագրերն ու չափորոշիչները, դպրոցական դասագիրքը և լեզվի պետական տեսության մշակած կանոններն ու հրահանգները[5]: Հատուկ անունների ուղղագրության ուսուցման նպատակն է ուղղագրության վերաբերյալ աշակերտների գիտելիքների խորացումը, վերացարկելու, դիտարկումներ կատարելու, քննադատական մոտեցումներ դրսևորելու կարողությունների ձևավորումը: Հատուկ անունների տեսակների (միաբառ և բազմաբառ) դիտարկումը նպատակային է իրականացնել համեմատության միջոցով զուգադրելով միաբառ և բազմաբառ հատկանուններ, ինչպես՝ Երևան - Հայաստանի Հանրապետություն, Մոսկվա - Մեսրոպ Մաշտոց: Բառաշարքերը համեմատելով պարզաբանվում է, որ հատուկ անուն-

---

[4] Լ. Խաչատրյան, Ֆ. Խլղաթյան,Հայոց լեզվի դասագիրք հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի համար, Եր., «Զանգակ – 97» հրատ., 2006:

[5] Հատուկ գոյականների ուղղագրության ուսուցումը իրականացվում է՝ նկատի ունենալով հանրակրթական դպրոցի առարկայական ծրագրերն ու չափորոշիչները, դպրոցական դասագրքերը և լեզվի պետական տեսության մշակած կանոններն ու տված հրահանգները. ա) ՀՀ ԿԳՆ կրթական ծրագրերի կենտրոն, Կրթության ազգային ինստիտուտ, Հայոց լեզու և գրականություն, (Կրթակարգ, չափորոշիչներ, առարկայական ծրագրեր, ուսուցման նյութեր և նոր մեթոդներ), Ե., 2006:
բ) Ֆ.Խլղաթյան, Լ.Խաչատրյան, Հայոց լեզու, դասագիրք հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի համար, Ե., «Զանգակ – 97» հրատ., 2006:
գ) ՀՀ Կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչության հայերենի բարձրագույն խորհրդի վերջին որոշումը բաղադրյալ հատուկ անուններում մեծատառերի գործածության մասին (ըստ «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատուի», Ե.,1994թ.):

ները կարող են բաղկացած լինել մեկ բառից՝ պարզ (Երևան), ածանցավոր (Հայաստան), բարդ (Արևհատ) և մեկից ավելի բառերից:

Նախ ուսուցիչն անդրադառնում է միաբառ հատուկ անունների ուղղագրությանը: Աշակերտները դեռևս տարրական դասարանից գիտեն, որ գրավոր խոսքում հասարակ անուններից տարբերվելու համար հատուկ անունների առաջին տառը գրվում է մեծատառով: Աշակերտներին բացատրվում է, որ որպես միաբառ հատուկ անուններ կարող են հանդես գալ անձնանունները (Հայկ, Նարե, Վարդան և այլն), տեղանունները (Գյումրի, Արցախ, Ասիա և այլն), կենդանիների անունները (Շաղիկ, Ձեկո, Չալանկ և այլն), տիեզերական եզակի մարմինների և մոլորակների անունները (Արեգակ, Յուպիտեր, Նեպտուն և այլն): Այստեղ աշակերտները սովորում են այն գոյականների ուղղագրությունը, որոնք գործածվում են և հասարակ, և հատուկ անունների արժեքներով: Այդ նպատակով ուսուցիչը գրատախտակին գրում է երկիր-Երկիր, արեգակ-Արեգակ, լուսին-Լուսին հասարակ և հատուկ անունները և կազմելով նախադասություններ:

Ուսուցիչը, աշակերտների ուշադրությունը հրավիրելով նախադասությունների վրա, բացատրում է, որ առաջին և երկրորդ նախադասություններում **արեգակ, երկիր, լուսին** բառերը հասարակ անուններ են, հետևաբար գրվում են փոքրատառով, իսկ երրորդ և չորրորդ նախադասություններում նույն բառերն աստղային համակարգության առանձին մարմինների անուններ են, բնականաբար հատուկ անուններ են և գրվում են մեծատառով: Աշակերտները լրացուցիչ տեղեկություններ են ստանում նաև այն բառերի մասին, որոնց ուղղագրությունը կարող է վիճահարույց լինել. կարող է դժվարություն առաջանալ որոշ բառերի գրության դեպքում մեծատա՞ռ, թե՞ փոքրատառ: Այդ բառերի ուսուցումը կատարվում է նմանօրինակ բառերը գրել տալով և համապատասխան բացատրությամբ:

1. Հատուկ անվան հոգնակին գրվում է մեծատառով, երբ նշանակում է տոհմ, գերդաստան, օրինակ՝ Արշակունիներ, Ալիմյաններ, Բագրատունիներ, Արտաշեսյաններ, Ռշտունիներ: Այդպես է նաև այն դեպքում, երբ մեկից ավելի անձիք նույն անունն ու ազգանունն են կրում, օրինակ՝ նույն դասարանի Աննաները կամ Գասպարյանների ընտանիքը:

2. **Եկեղեցի** բառը թե առանձին գործածությամբ, թե բաղադրյալ հատուկ անուններում գրվում է փոքրատառով (եկեղեցի նշանակում է շինություն, կառույց, քրիստոնեական կրոնով միացած մարդկանց խումբ), Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, Հայաստանյաց առաքելական՝ եկեղեցի, Հայաստանյաց ավետարանչական* եկեղեցի, Սուրբ Սարգիս եկեղեցի:

---

* Կրոնա-եկեղեցական ոլորտում սակայն ընդունված է այդ հաստատությունների մեծատառով գրության որոշակի համակարգ (օրինակ Առաքելական, Ավետարանչական և այլն):

Բազմաբառ հատկանուններ դիտարկելիս լրացուցիչ տեղեկություն են ստանում կայուն բառակապակցությունների մասին: Հակիրճ զրույցի միջոցով աշակերտներին բացատրվում է, որ կայուն բառակապակցությունները կազմված են երկու և ավելի բառերից, որոնք, միանալով իրար հետ, դառնում են անբաժանելի, նախադասության մեջ հանդես են գալիս որպես նախադասության մեկ անդամ: Գոյություն ունեն նախադասությունից դուրս և պատրաստի ձևով գործածվում են խոսքի մեջ:

«Հատուկ անունների ուղղագրությունը» թեման առանձնապես բարդ է բաղադրյալ հատուկ անունների ուղղագրությունը յուրացնելու առումով: Հատկապես դժվարություն է հարուցում բազմաբաղադրիչ հատկանունների ուղղագրության կանոնների մտապահումը: Ուստի այստեղ կարևորվում է ուղղագրության վերաբերյալ համապատասխան ուսումնական նյութի օգտագործման, որոշակի վարժությունների, ինքնուրույն աշխատանքների խելամիտ կազմակերպումը ուղղագրական կանոնները մատչելի ձևով սովորեցնելու համար:

Որպես դիդակտիկ նյութ կարելի է օգտագործել դասագիրքը (էջ 11) կամ բազմաբաղադրիչ հատուկ անունների ուղղագրության կանոնների վերաբերյալ համապատասխան ցուցապաստառ: Քանի որ թեման բավականին բարդ է, ուստի նպատակային է կիրառել զրույցի մեթոդը կոնկրետ օրինակներով դիտարկումներ, մտահանգումներ, ընդհանրացումներ կատարելով (ինդուկտիվ եղանակով): Նախ ուսուցանվում են այն բաղադրյալ հատուկ անունները, որոնց բոլոր բաղադրիչների առաջին տառն է գրվում մեծատառով: Սովորողների տրամաբանական մտածողությունը զարգացնելու նպատակով աշակերտներին տրվում են յուրաքանչյուր կանոնին համապատասխան ճիշտ գրված օրինակների շարքեր: Ուսուցչի օգնությամբ աշակերտները ուշադիր դիտում են, համեմատում, ընհանրություններ կատարում և ձևակերպում սահմանումները:

Այնուհետև ուսուցիչը աշակերտներին ուղղում է հետևյալ հարցը. «Իմաստային և գրության ինչպիսի՞ ընդհանրություն ունեն յուրաքանչյուր շարքի հատուկ անունները»:

Դիտարկելով շարքերը աշակերտները եզրակացնում են, որ առաջին շարքի հատուկ անունների ընդհանրությունը այն է, որ դրանք պետությունների պաշտոնական անուններ են, և բոլոր բաղադրիչների առաջին տառը գրվում է մեծատարով, իսկ երկրորդ շարքի հատուկ անունները «անձնանուն + մականուն» և «մականուն + անձնանուն» կառուցվածք ունեցող բաղադրյալ հատուկ անուններ են, որոնց բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով և այլն:

Նմանատիպ աշխատանք կատարելիս կարելի է օգտագործել պատրաստի ցուցապաստառ, որի այն հատվածը, որտեղ արդեն կա ճիշտ սահմանումը, «թաքնված է»: Յուրաքանչյուր անգամ ընդհանրացում կատարելուց հետո ուսուցիչը բացում է կանոնը ծածկող շերտը, և աշակերտները իրենց եզրահանգումները համեմատում են ճիշտ գրված կանոնի հետ:

Բոլոր դեպքերի համար կանոնները սահմանելուց հետո կազմակերպվում է ամրակայող աշխատանք **խմբային մեթոդով**:

Յուրաքանչյուր խմբին տրվում են քարտեր, որտեղ ոչ համակարգված (խառը ձևով) նշված են գրության տարբեր կանոններին վերաբերող (ճիշտ գրված) հատուկ անուններ: Յուրաքանչյուր խումբ քննարկում, ճշտում և ինքնուրույն դասդասում է հատուկ անունները ըստ համապատասխան կանոնի: Այս ընթացքում ուսուցիչը շրջում է, ուղղորդում, օգնում: Աշխատանքն ավարտելուց հետո բոլոր խմբերը ներկայացնում են իրենց եզրահանգումները (կարող են շարքերը համալրել ինքնուրույն օրինակներով) և ուսուցչի օգնությամբ կատարում ճշգրտումներ:

Այս աշխատանքը կարելի է կազմակերպել մրցույթի ձևով. հաղթում է այն խումբը, որն առավել ճշգրտորեն է կատարել հանձնարարությունը:

Որպես անհատական աշխատանք աշակերտներին հանձնարարվում է ընթերցել դասագրքի համապատասխան նյութը (էջ 11-12), կատարել վարժություն 1-ը (էջ 13) կամ որևէ տեքստուսույցի ընտրությամբ նշումներ կատարել փոխգործուն նշանների աղյուսակում (յուրաքանչյուրն իր համար): Փոխգործուն գրառումների համակարգը (ՓԳՀ) օգնում է աշակերտներին նյութը կարդալու ընթացքում վերահսկել սեփական ընկալումը: Կարդալիս արվում են գրառումներ հետևյալ փոխգործուն նշաններով.

V = գիտեմ

+ = նոր տեղեկություն է (չգիտեմ)

- = իմացածին հակասում է.

? = անհասկանալի է, կարելի է քննարկել.

Ընթերցանության ընթացքում այս նշանների օգտագործումը նպաստում է ակտիվ, քննադատական ուսուցմանը նորը, հակասականը, անհասկանալին ընդգծելու առումով:

Անհատական աշխատանքը ավարտելուց հետո ուսուցիչը լրացուցիչ բացատրություն է տալիս չիմացածը հասկանալու, յուրացնելու համար և ամրակայում աշակերտների սովորածը:

Հատուկ անունների ուղղագրությունը ուսուցանելիս հատկապես անհրաժեշտ է բառարանների կիրառումը: «Հասարակ և հատուկ գոյականներ» թեման ուսուցանելիս այնպիսի վարժություններ, հետազոտական աշխատանքներ (պատմություն, աշխարհագրություն), գրառումներ, համր բնագրեր պետք է կիրառել, որոնք լինեն բազմաբնույթ, հետաքրքրական և նյութի յուրացմանն ու ամրապնդմանը զուգահեռ նպաստեն նաև աշակերտների ինքնուրույնության և ստեղծագործական կարողությունների զարգացմանը: